Հաստատված է ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ
«_31_ »__08__ 2020 թ.-ի նիստում (արձ. թիվ 1):
Ամբիոնի պետ, ոստ. փոխգնդապետ
Ա. Հովհաննիսյան ……
(ստորագրություն)

……
(ամիս ամսաթիվ)

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		ՀՀ քրեական դատավարության իրավունք – 2 (հեռակա անվճար ուսուցում)
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ		Իրավագիտություն
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ		Քրեական դատավարության ամբիոն E-mail: qrdatambion@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ		Ա. Հովհաննիսյան (ի.գ.թ., դոցենտ) E-mail: qrdatambion@mail.ru Հեռ.՝ +374 93000762
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ		4-րդ կուրս, 1-ին կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ		բակալավր

ԿՐԵԴԻՏՆԵՐ		**4 (չորս)**
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ		«ՀՀ քրեական դատավարության իրավունք – 2» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 120 ժամ, որից 6-ը՝ դասախոսություն, 2-ը՝ գործնական, 112-ը՝ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը երկու անգամ՝ 80 րոպե տևողությամբ: Դասընթացը գնահատվում է կուրսային աշխատանքի պաշտպանության և քննության անցկացմամբ:

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ		Դասընթացը կառուցվում է «Պետության և իրավունքի տեսություն», «Իրավապահ մարմիններ», «ՀՀ սահմանադրական իրավունք», «ՀՀ քրեական իրավունք» և «ՀՀ քրեական դատավարության իրավունք – 1» դասընթացների իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		«ՀՀ քրեական դատավարության իրավունք – 2» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են քրեական գործի հարուցման, նախնական քննության ընդհանուր պայմանները, քննչական գործողությունների իրականացման կարգը և պայմանները:
ՆՊԱՏԱԿ/ԽՆԴԻՐՆԵՐ		Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ քրեական գործի հարուցման ու նախնական քննության իրականացման վերաբերյալ: Դասընթացի խնդիրներն են՝ 1. բացատրել քրեական գործի հարուցման փուլի նշանակությունը և խնդիրները, քրեական գործի հարուցման հիմքերը, առիթները և դատավարական կարգը, 2. ներկայացնել նախնական քննության նշանակությունը, խնդիրները և ընդհանուր պայմանները, 3. բացատրել որպես մեղադրյալ ներգրավելու ու մեղադրանք առաջադրելու նշանակությունը և դատավարական կարգը, 4. սահմանել քննչական գործողությունների հասկացությունը, բացատրել դրանց կոնկրետ տեսակների իրականացման դատավարական կարգը:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 1. ***Կարողանա՝***		1. նկարագրել քրեական գործի հարուցման հիմքերն ու առիթները. 2. նկարագրել նախնական քննության ընդհանուր պայմանները և պահպանել դրանք դատավարական փաստաթղթեր պատրաստելիս. 3. օրենքով սահմանված կարգին համապատասխան կայացնել որոշում անձին որպես մեղադրյալ ներգրավելու և մեղադրանք առաջադրելու մասին. 4. սահմանել քննչական գործողությունների հասկացությունը, բացատրել քննչական գործողության նշանակությունը ապացուցման գործում, օրենքով սահմանված կարգին համապատասխան կայացնել որոշում քննչական գործողության կատարման մասին, կազմել քննչական գործողության արձանագրություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (մինչդատական վարույթ): Մաս 2/ Հեղ. խումբ: Գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան. – Եր., Տիգրան Մեծ, 2017: 2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս. Երևան, Երևանի համալս. հրատ., 2010: 3. Уголовный процесс: учебник / под ред.: Божьев В.П. – 4-е изд., перераб. и доп. – М.: Спарк, 2004. 4. Уголовно-процессуальное право Российской Федерации: учебник / отв. ред. П.А. Лупинская. – М., 2011. 5. Уголовный процесс. Общая и Особенная части: учебник для юридических вузов и факультетов / под ред.: В.В. Вандышева – М.: Контракт, 2014. 6. Уголовно-процессуальное право: учебник для бакалавриата и магистратуры / под общ. ред.: В.М. Лебедева. – 2-е изд., пер. и доп. – М.: Издательство Юрайт, 2017.
Լրացուցիչ		***Թեմա 6.*** 1. *Марфицин, П.Г.* Возбуждение уголовного дела в отношении лица, подозреваемого в совершении преступления: монография / П.Г. Марфицин. – Н. Новгород: Нижегородская академия МВД России, 2009. 2. *Черепанова, Л.В.* Возбуждение уголовного дела в вопросах и ответах: учебно-методическое пособие / Л.В. Черепанова. – М., 2012. 3. *Цапко, Ж.Б.* Возбуждение уголовного дела: учебное пособие / Ж.Б. Цапко. – М., 2011. ***Թեմա 7.*** 1. *Азаров, В.А.* Функция предварительного расследования в истории, теории и практике уголовного процесса России: монография / В.А. Азаров, Н.И. Ревенко, М.М. Кузембаева. – Омск: Изд-во ОмГУ, 2006. 2. *Есина, А.С.* Производство дознания органами внутренних дел: некоторые процессуальные и организационные аспекты / А.С. Есина // Электронный ресурс, подготовлено для СПС Консультант плюс, 2007. 3. *Ефимичев, П.С.* Расследование преступлений: теория, практика, обеспечение прав личности : монография / П.С. Ефимичев, С.П. Ефимичев. – М.: Юстицинформ, 2012. 4. *Малышева, О.А.* Предварительное расследование по УПК России (процессуальные и организационно-правовые аспекты): монография / О.А. Малышева. – М., 2004. ***Թեմա 8.*** 1. *Бравилова, Е.А.* Привлечение в качестве обвиняемого: учеб-

		ное пособие / Е.А. Бравилова – М., 2009. 2. *Дьяконова, О.Г.* Особый порядок принятия судебного решения при согласии обвиняемого с предъявленным обвинением: проблемы теории и практики / О.Г. Дьяконова // Российский судья. – 2010. – № 4. 3. *Ефремова, Н.П.* Привлечение в качестве обвиняемого: учеб. пособие: допущено МВД РФ / Н.П. Ефремова, В.В. Кальницкий. – Омск: ОА МВД РФ, 2012. ***Թեմա 9.*** 1. *Вдовцев, П.В.* Неотложные следственные действия в российском уголовном процессе: вопросы теории, практики и законодательной регламентации: монография / П.В. Вдовцев. – М., 2012. 2. *Гармаев, Ю.П.* Руководство для следователя и его общественного помощника: учебно-практическое пособие / Ю.П. Гармаев // СПС КонсультантПлюс. 3. *Мусеибов, А.Г.* Правила применения цифровой аппаратуры и компьютерной техники при производстве следственных действий / А.Г. Мусеибов // СПС КонсультантПлюс.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ		Բաղադրիչ 1 – կուրսային աշխատանքի պատրաստում և պաշտպանություն Բաղադրիչ 2 – կիսամյակային ամփոփիչ քննություն
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ		Գնահատման արդյունարար միավոր / Գնահատականը տառանշումով 18-20 / Գերազանց 13-17 / Լավ 8-12 / Բավարար 0-7 / Անբավարար 0 / Չներկայացած
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ		Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% առաջադիմություն: Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար»: Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝ ա) «Գերազանց», եթե սովորողը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է

		առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով. բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների. գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները. դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին:
Ներկայություն		Ուսանողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկնդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Ուսանողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:
Ինքնուրույն և գործնական աշխատանքներ		Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը՝ ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի**:**

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Թեմա 6 Քրեական գործ հարուցելը **(2 ժամ գործնական պարապմունք)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Քրեական գործ հարուցող մարմինները և պաշտոնատար անձինք 2. Քրեական գործի հարուցման առիթները և հիմքերը 3. Քրեական գործ հարուցելու կարգը 4. Քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքները 5. Հանգամանքներ, որոնք թույլ են տալիս չիրականացնել քրեական հետապնդում, կարճել քրեական գործի վարույթը և դադարեցնել քրեական հետապնդումը	Հարցեր 1-5՝ գործնական պարապմունք – քրեական գործի հարուցման և քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումների ձևաթղթերի պատրաստում: Հարց 1,2,4, 5՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 7 Նախնական քննություն: Նախնական քննության ընդհանուր պայմանները **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Նախնական քննության հասկացությունը, նշանակությունը և խնդիրները: **2.** Հետաքննության մարմինները, խնդիրները, հետաքննության բովանդակությունը: Հետաքննության ժամկետը: Հետաքննության ավարտման ձևերը: **3.** Նախաքննության մարմինները, խնդիրները, բովանդակությունը: Նախաքննության ժամկետը: Նախաքննության ավարտման ձևերը: **4.** Նախնական քննության ընդհանուր պայմանների հասկացությունը և համակարգը: **5.** Քննչական ենթակայությունը: **6.** Քննչական գործողություններ կատարելու ընդհանուր պայմանները:	Հարցեր 1-6՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 4-6՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 8 Որպես մեղադրյալ ներգրավելը և մեղադրանք առաջադրելը **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Որպես մեղադրյալ ներգրավելու հասկացությունը և նշանակությունը: 2. Մեղադրանք առաջադրելու դատավարական կարգը:	Հարցեր 1-2՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-2՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 9 Քննչական գործողությունները **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Քննչական գործողությունների հասկացությունը և տեսակները 2. Հարցաքննություն, դրա տեսակները 3. Առերեսում 4. Ձննում 5. Արտաշիրմում և քննում 6. Ճանաչման ներկայացնելը 7. Խուզարկություն. տեսակները, կատարման հիմ-քերը և կարգը 8. Առգրավում 9. Գույքի վրա կալանք դնելը 10. Նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները վերահսկելը 11. Հեռախոսային խոսակցությունները լսելը 12. Քննչական փորձարարություն 13. Փորձաքննություն կատարելը 14. Հետազոտության համար նմուշներ ստանալը	Հարցեր 1-14՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-14՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Ց Ա Ն Կ

«ՀՀ քրեական դատավարության իրավունք – 2» առարկայից
հանձնարարվող կուրսային աշխատանքի թեմաների

1. Քրեական դատավարության էությունը և նշանակությունը: Քրեական դատավարության պատմական տիպաբանությունը.
2. Քրեադատավարական իրավահարաբերությունները.
3. Քրեադատավարական օրենքի գործողությունը տարածության վրա.
4. Քրեադատավարական օրենքի գործողությունը ժամանակի մեջ.
5. Քրեադատավարական օրենքի գործողությունը ըստ անձանց շրջանակի (քրեական դատավարական օրենքի կիրառման սահմանափակումները).
6. Օրինականությունը: Հավասարությունը օրենքի և դատարանի առջև.
7. Անձի անձեռնմխելիությունը.
8. Բնակարանի և գույքի անձեռնմխելիությունը.
9. Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը.
10. Քրեական դատավարության լեզուն.
11. Դատական քննության հրապարակայնությունը.
12. Անմեղության կանխավարկածը.
13. Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը և դրա ապահովումը.
14. Ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելը.
15. Մրցակցությունը քրեական դատավարության ընթացքում.
16. Դատարանը որպես քրեական դատավարության սուբյեկտ.
17. Դատախազը որպես քրեական դատավարության սուբյեկտ.
18. Քննիչը որպես քրեական դատավարության սուբյեկտ.
19. Քննչական բաժնի պետը որպես քրեական դատավարության սուբյեկտ.
20. Հետաքննությունը և հետաքննության մարմինները.
21. Տուժողը, տուժողի իրավահաջորդը.
22. Քաղաքացիական հայցը և դրա լուծումը քրեական դատավարությունում.
23. Կասկածյալը և մեղադրյալը.
24. Պաշտպանը, նրա գործառույթները քրեական դատավարությունում.
25. Ներկայացուցչությունը քրեական դատավարությունում.
26. Մասնագետը և փորձագետը որպես դատավարությանը մասնակցող այլ անձինք.
27. Վկան որպես քրեական դատավարության սուբյեկտ.
28. Բացարկը քրեական դատավարությունում.
29. Ապացուցում: Ապացուցման առարկան և սահմանները.
30. Վկայի և տուժողի ցուցմունքները որպես ապացույցի տեսակ.
31. Կասկածյալի և մեղադրյալի ցուցմունքները որպես ապացույցի տեսակ.
32. Փորձագետի եզրակացությունը որպես ապացույցի տեսակ.
33. Իրեղեն ապացույցները որպես ապացույցի տեսակ.
34. Քննչական և դատական գործողությունների արձանագրությունները որպես ապացույցի տեսակ.
35. Այլ փաստաթղթերը որպես ապացույցի տեսակ.
36. Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործումը քրեական դատավարությունում.
37. Ձերբակալումը.
38. Կալանավորումը և գրավը որպես խափանման միջոցներ.

39. Ստորագրություն՝ չհեռանալու մասին.
40. Երաշխավորությունը որպես խափանման միջոց (անձնական և կազմակերպության).
41. Հսկողության հանձնելը որպես խափանման միջոց.
42. Հրամանատարության հսկողության հանձնելը որպես խափանման միջոց.
43. Դատավարական հարկադրանքի այլ միջոցները.
44. Քրեական գործի հարուցումը.
45. Քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքները.
46. Հանգամանքներ, որոնք թույլ են տալիս չիրականացնել քրեական հետապնդում, կարճել քրեական գործի վարույթը և դադարեցնել քրեական հետապնդումը.
47. Որպես մեղադրյալ ներգրավելը.
48. Մեղադրանքի առաջադրումը և փոփոխումը քրեական դատավարությունում.
49. Հարցաքննությունը և առերեսումը.
50. Զննումը.
51. Արտաշիրմումը և քննումը.
52. Ճանաչման ներկայացնելը.
53. Խուզարկությունը.
54. Առգրավումը.
55. Նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները վերահսկելը: Հեռախոսային խոսակցությունները լսելը.
56. Քննչական փորձարարությունը.
57. Փորձաքննություն նշանակելը և կատարելը.
58. Քրեական գործով վարույթի կասեցման հիմքերը և կարգը: Կասեցված վարույթի վերսկսումը.
59. Քրեական գործով վարույթի կարճման և քրեական հետապնդումը դադարեցնելու կարգը.
60. Մեղադրական եզրակացությամբ նախաքննության ավարտումը.
61. Նախնական դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ.
62. Հետագա դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ.
63. Վարույթը առաջին ատյանի դատարանում.
64. Դատական քննության արագացված կարգը.
65. Վերաքննիչ վարույթը.
66. Վճռաբեկ վարույթը.
67. Անչափահասների գործերով վարույթը.
68. Անմեղսունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթները.
69. Դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթները.
70. Հանձնումը որպես քրեական գործերով միջազգային-իրավական օգնության դրսևորում.

ՀԱՐՑԱՇԱՐ

«ՀՀ քրեական դատավարության իրավունք - 2» առարկայի
կիսամյակային ամփոփիչ քննության

1. Քրեական դատավարության հասկացությունը, էությունը և խնդիրները
2. Հիմնական քրեադատավարական հասկացություններ (քրեադատավարական ֆունկցիաներ, դատավարական ձև, դատավարական երաշխիքներ)
3. Քրեադատավարական իրավական նորմեր, դրանց տեսակներն ու կառուցվածքը
4. Անմեղության կանխավարկածը
5. Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը և դրա ապահովումը
6. Մրցակցությունը քրեական դատավարությունում
7. Ապացույցների ազատ գնահատումը
8. Դատարանի կազմը և լիազորությունները
9. Դատախազը, նրա լիազորությունները մինչդատական վարույթում և քրեական գործը կամ նյութը դատարանում քննելիս
10. Քննիչը
11. Մեղադրյալը
12. Պաշտպանը: Պաշտպանի պարտադիր մասնակցությունը
13. Ապացուցման հասկացությունը և ընդհանուր բնութագիրը: Ապացուցման նպատակը
14. Քրեական գործով ապացուցման առարկան և սահմանները: Որոշակի ապացույցների առկայությամբ հաստատվող հանգամանքները
15. Ապացույցի հասկացությունը: Որպես ապացույց թույլատրվող նյութերը
16. Ապացույցների թույլատրելիությունը և վերաբերելիությունը
17. Ապացույցների դասակարգումը
18. Ապացուցում (ապացույցների հավաքումը, ստուգումը և գնահատումը)
19. Ցուցմունքները որպես ապացույցի տեսակ
20. Փորձագետի եզրակացությունը որպես ապացույցի տեսակ
21. Իրեղեն ապացույցները որպես ապացույցի տեսակ
22. Քննչական և դատական գործողությունների արձանագրությունները
23. Այլ փաստաթղթերը որպես ապացույցի տեսակ
24. Դատավարական հարկադրանքի միջոցների հասկացությունը և նշանակությունը
25. Ձերբակալման հասկացությունը, տեսակները և կիրառման դատավարական կարգը
26. Խափանման միջոցների հասկացությունը և տեսակները
27. Խափանման միջոցների կիրառման հիմքերը և դատավարական կարգը
28. Խափանման միջոցները ըստ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի
29. Կալանավորում և գրավ
30. Ստորագրություն՝ չհեռանալու մասին
31. Անձնական երաշխավորություն
32. Կազմակերպության երաշխավորություն
33. Հսկողության հանձնելը
34. Հրամանատարության հսկողության հանձնելը
35. Դատավարական հարկադրանքի այլ միջոցները
36. Քրեական գործի հարուցման փուլի հասկացությունը և նշանակությունը
37. Քրեական գործ հարուցող մարմինները և պաշտոնատար անձինք
38. Քրեական գործի հարուցման առիթները և հիմքերը
39. Քրեական գործ հարուցելու կարգը
40. Քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքները

41. Հանգամանքներ, որոնք թույլ են տալիս չիրականացնել քրեական հետապնդում, կարճել քրեական գործի վարույթը և դադարեցնել քրեական հետապնդումը
42. Նախնական քննության փուլի հասկացությունը, նշանակությունը և խնդիրները
43. Հետաքննություն
44. Նախաքննություն
45. Նախնական քննության ընդհանուր պայմանների հասկացությունը և համակարգը
46. Նախաքննության մարմինները: Քննչական ենթակայություն: Նախաքննության պարտադիր լինելը
47. Որպես մեղադրյալ ներգրավելու հասկացությունը և նշանակությունը
48. Որպես մեղադրյալ ներգրավելու հիմքը և կարգը
49. Մեղադրանք առաջադրելու դատավարական կարգը: Մեղադրանքի փոփոխումը և լրացումը
50. Քննչական գործողությունների հասկացությունը, նշանակությունը և տեսակները
51. Քննչական գործողությունների կատարման ընդհանուր կանոնները
52. Վկայի և տուժողի հարցաքննությունը
53. Կասկածյալի և մեղադրյալի հարցաքննությունը
54. Առերեսում
55. Քննում և արտաշիրմում
56. Ձննում
57. Ճանաչման ներկայացնելը
58. Խուզարկություն. տեսակները, կատարման հիմքերը և կարգը
59. Առգրավում
60. Գույքի վրա կալանք դնելը
61. Նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները վերահսկելը
62. Հեռախոսային խոսակցությունները լսելը
63. Քննչական փորձարարություն
64. Փորձաքննություն նշանակելը և կատարելը
65. Հետազոտման համար նմուշներ ստանալը